ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնք
ՀՀ, Արմավիրի մարզ, ք.Արմավիր, (0237) 2-36-54, armavirmunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՕԳՈՍՏՈՍԻ 2023թվականի N 1025-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2023Թ ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇՎՈՒՄ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ կետով, Արմավիր համայնքի ավագանու 26.12.2022թ. թիվ 217-Ն որոշման 8-րդկետով, հիմք ընդունելով աշխատակազմի կրթության, մշակույթի և երիտասարդության հարցերի բաժնի պետ Լ.Աֆրիկյանի 03.08.2023 թ-ի թիվ 4452 զեկուցագիրը

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

1. 01 բաժնի 6 խմբի 1 դասի «Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող)» ծրագրի համայնքապետարանի ծախսերի «Մասնագիտական ծառայություններ» 4241 հոդվածի պլանը պակասեցնել 210,0 հազար դրամով և ավելացնել «Ապահովագրական ծախսեր» 4215 հոդվածի պլանին, Համահայկական 8-րդ խաղերին համայնքի 21 մարզիկների համար բժշկական ապահովագրության վկայական ձեռք բերելու համար:

2.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի 2023թ. բյուջեի և ծախսերի նախահաշվում կատարել համապատասխան փոփոխություններ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ԽՈՒԴԱԹՅԱՆ**

2023 թ. օգոստոսի 4
ք. Արմավիր